

1901 քուականի ընթացում Ռուսաստանում լոյս տեսած
հայոց գրքերի համառոտ վիճակագրութիւնը.

1901 թուականի ընթացքում լոյս են տեսել հայերէն լեզուով
68 գիրք, որոնցից 6-ը նախորդ տարիների գործ են, որոնք
այս տարի արժանացել են երկրորդ տպագրութեան: Այդ
6 գրքերից 3-ը թարգմանական հէքիաթներ են, 1-ը ինքնու-
րոյն վէպ, 1-ը ինքնուրոյն թատերական գրուածք և 1-ը
ժողովրդական երգարան: Զը հաշուելով յիշեալ 6 գիրքը՝ տեղը
կը մնայ 62:

Ուրեմն՝ 1901 տարեշրջանում մեր գրականութիւնը հա-
րստացել է 62 գրքով, որից 44-ը ինքնուրոյն գրուածքներ են և
18-ը թարգմանական:

Յիշեալ 62 գրքերը ըստ բովանդակութեան հետեւեալ գրա-
դաշխումն ունեն. — 11 գիրք բժշկական գրուածքներ են, որոն-
ցից մէկը այս տարուայ մէջ երկրորդ տպագրութեան է արժա-
նացել. դա բժիշկ Վ. Արծրունու «Մի խմբի» գրքոյն է. 9-ը
կրօնական գրուածքներ են, որից 3-ը հոգևորական դասակարգի
մասին, 1-ը դասագիրք, 1-ը վանքի նկարագրութիւն և մնացած
4-ը գիտնական, 6-ը ժողովրդական կենսքի ուսումնասիրու-
թիւններ են, 6-ը վիպական, 5-ը կենսագրական, 4-ը մանկա-
կան, 5-ը հետազոտական, 2-ը գիտական, 2-ը աշակերտելոց
դասագիրք, 2-ը ճանապարհորդական, 2-ը երգիծաբանական,
որից մէկը դաւառաբարբառ, 2-ը հէքիաթ, 1-ը չափաւոր (բա-
նաստեղծութիւն) գրուածք, 2-ը պօէմա, 1-ը դիւղատնտեսա-
կան, 1-ը թատերական և 1-ը խոհարարական ձեռնարկ:

Մանկական գրքեր մեղանում չատ են պակասում:

Միչգեո խոշոր տառերով, հաստ թղթի վրայ, գունաւոր-
պատկերազարդ, գեղեցիկազմ փայլուն գրքերը զօրեղ գրաւա-
կան են մայրենի լեզուի տարածման նպաստելու գործում:

Այդ տեսակի գրքեր չատ են պահանջւում մանաւանդ մեծ
տօներին, երեխաներին ընծայելու համար: Տարաբախտաբար
նոր չքեղ մանկական գրքեր լոյս չեն տեսնում:

Խ. Խ.